

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝  Ռ. Մարտիրոսյան  
Կոտայքի տարածաշրջանային  
պետական քոլեջի կառավարման  
խորհրդի նախագահ  
16 փետրվար 2018 թվական

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ**

ՀՐԱԶԴԱՆ 2018

## **Ընդհանուր դրույթներ**

- 1.1. Գրադարանը ԿՏՊԲ-ի ստորաբաժանումներից է: Այն գիտական, ուսումնասովանողական և մշակութային – լուսավորական ստորաբաժանում է, գիտելիքների տարածման, պահպանության, հոգևոր և մտավոր շփման մշակութային կենտրոն: Գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԿՏՊԲ-ի գործող կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:
- 1.2. Սույն կանոնակարգը սահմանում է գրադարանի կարգավիճակը:
- 1.3. ԿՏՊԲ-ի գրադարանի կանոնակարգը հաստատվում է կառավարման խորհրդի կողմից:

## **Հիմնական խնդիրներն ու գործառույթները**

Գրադարանի հիմնական խնդիրներն են.

- 2.1. ԿՏՊԲ-ի ընթերցողական համակազմի գրական – տեղեկատվական սպասարկում՝ արդի գրադարանավարության և մասնագիտական պահանջների չափանիշներով:
- 2.2. Գրադարանային ֆոնդերի ( գրականություն, մամուլ, էլեկտրոնային գրադարան) շարունակական ձևավորում և համալրում՝ մասնագիտական ուսումնական գործընթացներին համապատասխան:
- 2.3. Տեղեկատվական – մատենագիտական ցանկերի կազմակերպում՝ տեղեկատվության ժամանակակից ձևերի մեթոդների ներդրմամբ:
- 2.4. Գրադարանային ծառայությունների շրջանակների ընդարձակում:
- 2.5. Համագործակցություն ՀՀ տարածքային և մարզային գրադարանների հետ:

## **Գրադարանի գործառույթներն են՝**

- 3.1. ԿՏՊԲ –ի գրադարանում միավորի գրանցում, վերագրանցում, ինչը ընթերցողին իրավունք և հնարավորություն է տալիս օգտվելու գրադարանի տացքակետից, առարկայական կաբինետներից՝ սպասարկման ձևով:
- 3.2. Գրականության շերտավորված սպասարկում՝ ընթերցող- արժեքների կազմին և պահանջարկին, ինչպես նաև գրադարանի առանձին բաժինների ուղղվածությամբ համապատասխան՝ շերտավորված, կաբինետներում անհատական, խմբակային, բաց դարակային:
- 3.3. Տեղեկատու- մատենագիտական սպասարկում:
- 3.4. Նոր ստացած գրականության ցուցադրում, մատենագիտական ցանկերի, քարտարանների

համալրում, միջոցառումների նախապատրաստում, անցկացում:

3.5. Անմիջական օգնություն ընթերցողին՝ գրականություն որոնելու, ընտրելու, տեղեկատու ապարատից օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում:

3.6. Գրադարանային ֆոնդերի ձևավորում և նպատակատուղիված համալրում՝ քոլեջում գործող ուսումնական պլաններին, ծրագրերին համապատասխան:

3.7. Ֆոնդերի ուսումնասիրություն, վերադասավորում, քայքայված, արդիականությունը կորցրած գրադարանային միավորի գտում, օտարում:

3.8. Ֆոնդի պարբերական վերլուծություն՝ ամբիոնների մասնակցությամբ, ուսումնական և գիտական գրականությամբ ապահովվածություն, վերահրատարակման ենթակա գրականության ընտրություն:

3.9. Ֆոնդերի տեղաբաշխման, պահպանման ռեժիմի իրականացում, գրականության վերականգնողական (կազմում- պատճենահանում) աշխատանքների կազմակերպում:

3.10. Ֆոնդերի բովանդակության մատենագիտական արտացոլում գրադարանային ավանդական գրացուցակների, քարտարանների միջոցով:

3.11. Ֆոնդերից ամբիոններին, կաբինետներին հանձնված գրականության առկայության ստուգումներ:

3.12. Գրադարանի աշխատակցի(ների) մասնագիտական որակավորման բարձրացում, մասնակցություն մարզում, հանրապետությունում կազմակերպվող որակավորման բարձրացում միջոցառումներին( դասընթացներ, կոնֆերանսներ, սեմինարներ) փորձի փոխանակման նպատակով գործուղումներ:

## **Կառուցվածքը և գործառույթները**

4. ԿՏՊԲ-ի գրադարանը իրականացնում է հետևյալ գործառույթները.

4.1. Համալրում, կոմպլեկտավորում

4.1.1. Գրացուցակավորում

4.1.2. Դասակարգում և առարկայավորում

4.1.3. Նոր ստացած գրականության մուտքագրում

4.1.4. Քարտարանների պահպանում և թարմացում

4.2. Գրապահոց

4.2.1. Գրականության պահպանում

4.2.2. Գրականության հիգիենայի պահպանում

4.2.3 Նոր գրականության դարակալություն

4.3 Արձեռնատային բաժին

4.3.1 Ուսանողության և աշխատակազմի հաճախելիության ամենամսյա հաշվետվություն

4.4 Հնատիպ գրականության պահպանություն և սպասարկում

4.4.1 Տեղեկատվություն տարբեր ձևերի և մեթոդների կիրառում(նոր ստացած գրականության ցուցադրում)

4.5 Ուսանողության համակարգչային սպասարկում

**Այլ գործառույթներ**

Գրադարանը անմիջականորեն ենթարկվում է ԿՏՊԲ -ի տնօրենին, գրադարանի հաստիքավորումը հաստատում և փոփոխում է տնօրենը: Գրադարանի աշխատողը (ները) պատասխանատու են գրքային ֆոնդերի պահպանման համար՝ գործող օրենքների շրջանակում:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն



Գ. Քևորգյան